« ի Քս յուսոյն հիմնադրեցի զսուրբ եւ զտիեզերական ուխտս Մար-
« մաչէն սկսեալ ի ՆԼԷ (= 988) թուականին Հայոց յաւուրս Սմբատայ
« որդւոյ Աշոտոյ Հայոց թագաւորի մինչեւ ի ժամանակս Յովանէսի որդ-
« ւոյ Գագկայ Հայոց չահանշահի առն իմաստնոյ չինողի եւ խաղաղարարի
« եւ ի թուականս Հայոց ՆՀԸ (= 1029) եւ կատարեցաք մեծ ջանիւ եւ
« բազում ծախիւք ես եւ մայր իմ Շուշիկ Հայոց տիկնաց տիկին եւ եղ-
« բարք իմ Վասակ իշխանաց իշխան որ նահատակեցաւ ի Թուրքաց պատե-
« բազմի եւ Աբլղարիբ Հայոց մարզպան եւ մանուկն Համզէ որք էաք ամե-
« նայն տամբ եւ տոհմիւ հաւատարիմ տերանց մերոց եւ նահատակեալ
« ի վերա տանս Հայոց աշխատութեամբ եւ արդեամբ մեր եւ որդւոց մե-
« րոց եւ գանձուց առատութեամբ եւ ամենայն հնարիւք խնդրէաք զխա-
« զաղութն աշխարհիս եւ զհաստատութն եկեղեցեաց չինեցաք եւ այլ
« բազում եկեղեցիս եւ վանորայս բայց զտեղի հանգստեանս մերոյ առա-
« ւել պատուով մեծացուցաք եւ լիացուցաք ամենայն զոյիւք լերամբք եւ
« դաշտաւք աւանդեցաք ի սա զեղս եւ ագարակս գանձագինս զԲագարանի
« գեղ եւ զիւր ագարակն զԳոդիսն եւ զՊորտանդն զԱրագէճ եւ զԱզատա
« զԱմանէն եւ զԵղնկայն ։ Ի յԱւշականի այգիք եւ Դ ջաղաց . եւ Բ ջա-
« ղաց ի Դողս ի յԱշտարակի այգի ի Կարբոյ դաշտի այգի . ի Սերկեւլէի
« այգի ի Վժան այգի ի Մրենի այգիք ի յԱնի տներ եւ կղզականի եւ զար-
« դարեցաք զսա ամենայն կազմութք ի յիշատակ յաւիտենից մեզ եւ որդ-
« ւոց մերոց եւ կարգեցաք ի ձեռն սբ հաւր Երեմիայի եւ որ զկնի յաջոր-
« դեցաւ Սոսթենէս նորին որդիացեալ . եւ փոխարէն հատուցման ընկալեալ
« մեր ի ժառանգաւորաց սբ ուխտս տարին Զ քառասունք անխափան
« մինչեւ ի գալուստն Քի արդ եթե ոք ի մերոց կամ յաւտարաց աւագ որ
« զմեր զտուրս ի սբ ուխտէս պակասեցանէ կամ հայր որ զմեր ժամս
« խափանէ ինքն որոշեալ լիցի ի Քէ եւ դատող նորա սատանայ լիցի եւ
« մի տեսցէ նա զփառս Այ իսկ որք հաստատուն պահեն զաւանդս մեր
« աւրհնեալ եղիցին » ։

Լեւոնի կտակն այսպէս չէ , եւ թերեւս միակն է իր տեսակին մէջ . վասն զի Հայոց վերջին թագաւորն Եւրոպայի մէջ ապրելով՝ իր կտակն ալ եւրոպական եղանակով պատրաստած է , այսինքն՝ նախ անձամբ ներկայացած է երկու նոտարներու եւ գրել տուած իր վերջին կամքը . ետքը՝ նոյն նոտարներու միջոցով դիմած է Պարիսի դատաւորապետութեան (prévôté) եւ վաւերացնել տուած իր կտակը ։

Չեմ կարծեր որ ուրիշ հայ թագաւոր մը այսպիսի կտակ մը աւանդած ըլլայ մեզ ։

Լեւոնի կտակն երկու օրինակ գրուած ու վաւերացուած է՝ 1392 թ.